ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի նոյեմբերի 15-ին

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Հոդված 10. Նախադպրոցական ուսումնական հաստատության խմբերի համալրումը**

1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների խմբերի համալրումը, որպես կանոն, իրականացվում է տարիքային, ընտանեկան և ազգակցական հատկանիշներով:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

<<3. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ բազմազավակ ընտանիքի երեխաների ընդունումը կատարվում է առաջնահերթ կարգով, իսկ ուսման վարձը փոխհատուցվում է առավելագույնը 50 տոկոսով, որի չափը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>>